ՄՍՈՒՐՅԻՔ

Գիւղս 1/4 ժամ Խօշեանայ արևելքն, ուղղակի խճուղւոյն վերայ 25 տուն Մսուրի ցեղին յատուկ քուրդ բնակիչ ունի։

Երկրորդ ճանապարհ մի ևս կանցնի սորա միջէն Թ. գալէ ի Խաստուր 3 ժամ ի հարաւ արևմուտս երկարացող ճանապարհին կիսուն վերայ շինուած է։

Նախ քան վերջին պատերազմն այս գիւղացիք լաւ շինութիւն և վիճակ ունէին, նաև պանդոկներ, իսկ այս օր զրկուած են, տակաւ առ տակաւ իւրեանց կալուածներն Մօլլայ-սիւլէյմանայ հայ կաթոլիկաց կը վաճառեն։

Ծերունիք կը պատմեն թէ 130 տարի առաջ դաշտիս մէջ երբէք քուրդ չը կար, միայն այն գիւղն էր, որք ևս հայկական շատ մի սովորութիւններ ունէին։

Մեր ճանապարհն արևելեան հարաւ ուղղուած արքունական խճուղին է, մեր աջ ու ձախ դաշտ է։ 3 1/2 ժամ մինչև Զլկանի հայ գիւղն ճանապարհ ունինք։

Դէպի աջ մեր առջև կը պարզուի Խաստուր, Կարսհան, Դաւոյ, Զուրուկ, Զլկանի գիւղերն իւրեանց քաւշանով և որոց հանդէպ բարձրացող Ղլիճ կեսուկի կրճի շարունակութիւնը ի հարաւ, որ երկարացած է յարևելս։

Իսկ դէպի ձախ՝ Վաղարշակերտի, Խաչլուայ, Ամատայ քաւշանը և որոց հիւսիսն բարձրացող Ջրաբաշի լեռներու շարունակութիւնը մինչև Սինակ։